



ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՀԱՐԱՐ 3 ՆՈՅԵՄ . 1906 . ԱԼԵՔՍԱՆԴՐԻՎ



ՏԻԿ. ԴՈՒՐԵԱՆ-ՊՐՄԵՆԵԱՆ

Տիկին Արմենեան ի բնէ բեմական կեանքի
նուիրուած տաղանդ մըն է. նախիբբիւ ամաթէօս
սկսած է մասնակցել թիֆլիզի թատերական

ներկայացմանց և յետոյ հետևելով իր հակումին՝
մտած է Պարուի ա. ամադիկական խմբին մէջ և
հոն Արմենեանի հսկողութեան տակ հեռոցհեռէ
կատարելագործած է իր դերասանական արուես-
տը և այսօր կը համարուի հալկասի հայկական
թատրոնին ամէնէն կարող ու փայլուն ուժերէն
մին:



Տ. ԱՐՄԵՆԵԱՆ

Տ. Արմենեան (Արմէն Իփէկեան) նմանապէս
ի ծնէ դերասան մըն է: Իր պատանեկութեան օ-
րերէն ձգած է իր առջև բացուող առևտրական
փայլուն ասպարէզ մը և ամէն զոհողութիւն
յանձն առնելով, ինքզինքը նուիրած է Արուեստին:

Փարիզի մէջ տարիներով աշակերտած է ԼԷ Պար-
ճիի, Լօժիէի և Բօլ Մունէի պէս մեծ վարպետ-
ներու և իր դերասանական ասպարէզը սկսած է
Քարիզի թատրոններէն միոյն մէջ ու յետոյ շարք
մը ներկայացումներու մասնակցած է Փրանսայի
գաւառները:

Արմենեան յետոյ անցած է Կովկաս ուր հինգ
տարիէ ի վեր ժամնակցած է Կովկասահայ բեմին
և իրեն համար շինած է տաղանդաւոր արուես-
տադէսի համբաւ մը:

Տ. Արմենեան ունեցած է նաև, իրեն տնօրի-
նութեան տակ, յատուկ խումբ մը որ մեծ յաջո-
ղութիւն վայելած է բովանդակ Կովկասի մէջ:

ԹԱՏՐՈՆ

Ինչպէ՛ ունեւորական փայլուն երեկոյթ մը տե-
ղի պիտի ունենայ յառաջիկայ շաբաթ գիշեր Զի-
զինիայի թատրոնին մէջ: Ինչպէս յայտնի է եր-
կու ամիսէ ի վեր Ալեքսանդրիա կը գտնուի ուր,
ոհհայ բեմի ծանօթ դերասան և խմբի վարիչ
Տիար Արմէնեան (Արմէն Իփէկեան) և իր ամու-
սինը՝ առաջնակարգ դերասանուհի օրիկ. Գուր-
եան-Արմենեան: Ամէն կողմէ յայտնուած փա-
փաքին գոհացում տալու համար կարգադիր
մասնախումբ մը, զոր կը կազմեն Տ. Տ.
Ա. պէյ Արշակեան, Պ. Օհանեան, Լ. Նիզամեան

Մ. Թելեան և Մ. Չամբերթէն, հրաւիրած են սոյն արուեստագէտները ներկայացում մը տալու Ալեքսանդրիոյ մէջ:

Ինչպէս ըսինք երեկոյթը տեղի պիտի ունենայ նոյեմբեր տասնին, Չիզինիա թատրոնին մէջ, ժամը երեկոյեան ճիշտ ինը քառորդ անցած: Ներկայացման պիտի մասնակցին տեղացի ամաթէօրներ: Երեկոյթը պիտի բաղկանայ երեք մասէ Ա. «Քրէմոնի Վնագործը», թատերգութիւն մէկ արար, հեղինակ՝ Ֆրանսուա Քորբէ, թարգմանիչ՝ Ա. Չօպանեան. Բ. ՀիիՒ, իրական կեանքէ տըրամ մը, երկու արար, հեղինակ՝ Էտուարտ Պըրանտէս. Գ. ՀԱՄԲՈՅՐԸ, Քօմէտի Ֆէէրի մէկ արար, հեղինակ՝ Թէոտոր աը Պանվիլ, թարգմանիչ՝ Արմենեան:

Ինչպէս կը տեսնուի երեկոյթը սարքուած է ամէնէն գեղարուեստասէր և գժուարահաճ ճաշակները գոհացնող կերպով:

Վստահ ենք որ Ալեքսանդրիոյ հայ հասարակութիւնը պիտի փութայ օգտուիլ առիթէն երթալ ծափահարելու համար երկու ճշմարտապէս բեմական տաղանդներ որոնք այնքա՞ն սակաւագիւտ են մեր մէջ:

ԾՐԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՒԼՏՈՒՔԸ

Նորէն Պօղոսեան վարժարանով զբաղելու ըստիպուած ենք, որովհետեւ նորէն Պօղոսեան վարժարանը կը շարունակէ գտնուիլ այն վիճակին մէջ ուր էր քանի մը տարիէ ի վեր:

Տնօրէնի փոփոխութիւնը, դպրոցին ընդհանուր բարեկարգութեան հաժար, շատ աննշան կարեւորութիւն ունի. էական բանը ուսուցչական իւրեւրը մաքրագործելն է և այս մասին տակաւին Հոգաբարձութիւնը բան մը չէ ըրած:

Կը լսենք թէ նախորդ Տնօրէն Սմբատ Բիւրատ ինձմակալութեան ուղղած իր տարեկան տեղեկագրին մէջ Պօղոսեան վարժարանի ամբողջ ուսուցչական մարմինը ազիկար և իր պաշտօնին անարժան ներկայացուցած է: Արդ, Սմբատ Բիւրատ չորս տարիէ ի վեր ամենօրեայ յարաբերութեան մէջ էր այդ մարդոց հետ, անոնց գասաւանդութեանց ներկայ գտնուած, ամէն մէկին կարողութիւնը մտէն տեսած ու քննած էր և անշուշտ իր գատաստանը բաւական կշիռ ունի, մանաւանդ որ բոլոր այդ « ազիկար » ներք իր բարեկամները, գործակիցները, պաշտպանեալները եղած են:

Ինչու տակայն Սմբատ Բիւրատ իր տարեկան վերջին տեղեկագրին մէջ երևան կը հանէ իւր պաշտօնատիրոջ անհաճութիւնը. այդ-

եօք չորս տարուան քննութեա՞ն մը պէտք ունեցաւ այդ բացայայտ իրողութիւնը նշմարելու համար, թէ մինչև հիմայ ուսուցիչները կարող ու իմաստուն էին և վերջին վայրկեանին յանկարծ Ս. Հոգին հակառակ կողմէն վրանին իջնելով այդ իմաստունները մէյմէկ ապիկարի փոխեց:

Թէ ի՞նչ զգացումներէ առաջնորդուած Սմբատ Բիւրատ այսօր ճշմարտութիւնը կը խօստովանի, այդ այնքան կարեորութիւն չունի՝ բուն խնդիրը այն է որ այդ ուսուցչական մարմինն տնօրէնը պաշտօնապէս կը հաստատէ այդ մարմնին անարժանութիւնը:

Ժողովուրդը սակայն պէտք չունեցաւ Սմբատ Բիւրատի տեղեկագրին, ուսուցիչներու վարքուբարքը և կարողութիւնը գիտնալու համար ու տարիներէ ի վեր պահանջեց դպրոցին մաքրագործումը:

Հոգաբարձութիւնը պէտք է գործէ և արագ կիսկատար բարենորոգումները ամէնէն վնասակարներն են

Լուսաբերի մէջ Ա. Ա. իրաւամբ դիտել կուտայ թէ «Երբ մտատիպար նոր տեսուչ մըն ալ գայ, դարձեալ միևնոյն ուսուցիչները միևնոյն դասերը պիտի տան, միևնոյն գրութեամբ: Եթէ շնորհքով կրնան բան սորվեցնել, պիտի շարունակեն բան սորվեցնել, եթէ չեն կրնար սորվեցնել, պիտի շարունակեն չսորվեցնել:»

Աւստի հոգարարձութիւնն ալ եթէ չփութայ
ուսուցչական մարմնին մէջ անհրաժեշտ փոփո-
խութիւնները կատարել, դպրոցը պիտի մնայ իր
առջի սորումնէի վիճակին մէջ և մեր հոգարար-
ձուներն ալ պիտի ըլլան մէյմէ՛կ Աստուր պէ՛յ
Շէրիտճեաններ:

Մէկի տեղ՝ հինգ Աստուր պէյ, ահա՛ շա-
հածնիս:

Ընդհանուր աւլաւք, ա՛ն է դարմանը,

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կիրակի առաւօտ Ս. Պօղոս Պետրոս եկեղե-
ցիին մէջ տեղի ունեցաւ ծխախոտի ծանօթ վա-
ճառական Գէորգ էֆ. Սարգիսեանի փետոյ՝ հան-
դուցեալ Բարսեղ էֆ. Իսփէնճեանի՝ հոգեհանդիս-
տը: Ինչպէս յայտնի է, Բարսեղ էֆէնտի վերջե-
րը Նաբոլիի մէջ վախճանած էր, հակառակ բժշ-
կական ինամքներու, անմխիթաբ սուգի մէջ ձը-
դելով իր աշտարակաւ կի՛նն ու դաւակները:

Սարգիսեան և Իսփէնճեան ընտանիքի բազ-
մաթիւ բարեկամները և ծանօթները փութացած
էին ներկայ գտնուիլ սոյն ախուր արարողութեան
և իրենց ցաւակցութիւնները յայտնել Գէորգ էֆ.
Սարգիսեանի:

Չենք ուզեր լռութեամբ անցնիլ անհաճոյ
կրողութեան մը մասին ո՛ր սոյն հոգեհանգստի

ասեն ներկաներէն շատերուն ուշադրութիւնը
գրաւեց:

Հակառակ որ Գէորգ էֆ. Սարգիսեան լի-
առատ նուէրներ ըրած էր թէ՛ եկեղեցիի և թէ՛
կրօնական դասին, քահանաները, իրենց անբու-
ժելի արծաթասիրութենէն վարակուած, եկեղե-
ցական ամբողջ արարողութեան միջոցին, անընդ-
հատ պնակ պտտցուցին եկեղեցիին մէջ, ի մեծ
տհաճութիւն սգակիր ընտանիքի անդամներուն:

Կարծենք թէ այսպիսի պարագաներուն, երբ
եկեղեցին և կրօնական դասը արդէն իրենց նիւ-
թական վարձքը բացէն և առատօրէն կը ստա-
նան, շատ անվայել է պապուկի պէս նօրէն պը-
նակ պտտցնելը, մանաւանդ որ այդ բանը կը-
նայ արդարացի կերպով վիրաւորել հոգեհանգիս-
տը կախարել տուող անձերուն արժանապատու-
ութիւնը:

Ձեր դանձը երկիրքի մէջ պատրաստեցէ՛ք,
ո՛վ քահանայք և վարդապետք:



ԼՈՒՍՍԱԲԵՐԻ ԵՐԿԻՈՐԴ ԶՐԳՍՐՏԱԿԱՆ

ՄՍՏՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ



Անցած թիւով համառօտակի մատնանիչ ըրած է-
ինք այն զազրելի արարքը որով Վահան Քի ըրճեանի
«Յառաջդիմասէր» (°°) Միութեան օսկան Լուսաբեր
Թերթը կրկին անպատուած էր եգիպտահայ մամուլը:

Քիւրքեաննի տիրահոչակ թերթը մեր յայտնութեանէն սահմակած՝ իր երեքշարթի օրուան թիւին մէջ ճըզակըտոր կ'ելլայ քանի մը անիմաստ յիշոցքներով խառն բացատրութեամբ մը ինքզինք արգարացնելու վըրան ծանրացող ահաւոր ամբաստանութենէն:

Բայց ոճրագործը այս անգամ դանակը ձեռքը բռնուած է և թոյլ չպիտի տանք որ Հանրային Կարծիքի դատաստանէն ճողոպրի:

Եւ որպէսզի եզրպատահայ հասարակութիւնը բմբռնէ գործուած արարքին ամբողջ զգուելի անարգութիւնը, պէտք կը զգանք աւելի մանրամասնօրէն զայն ներկայացնել մեր ընթերցողներուն:

Ասկէ քանի մը ամիս առաջ, Մէնչիէի հրապարակը, կիրակի օր մը, քանի մը Հայեր նստած են եղեր քաֆէ Մօհամմէտ Ալիի պարտէզը, երբ յոյն լրագրավաճառ մը զալով «Վիզանդիոն» թերթը կը ներկայացընէ, որ Պուլկարիոյ մէջ իբր թէ նահատակուած յոյն եպիսկոպոսի մը մեծագիր պատկերը կը պարունակէր: Հայերէն մին թերթը կ'առնէ, կը նայի և զինք կը հարցնէ:

- Երկու թարիֆա, կը պատասխանէ լրագրավաճառը:

- Մէկ թարիֆայի չըլլոր, կը հարցունէ Հայը ժրպտելով:

Այս միջոցին ուրիշ յոյն լրագրավաճառ մը վրայ կը հասնի և իր ընկերոջ կ'ըսէ.

- Զգէ, եղբայր, այդ Հայերը, չես տեսնար որ քեզի հետ կը զրօսնուն կոր:

Ատոր վրայ Հայերը քանի մը խօսք կ'ուզզեն լրագրավաճառներուն. անոնք կը սկսին նախատինքներ րսել, Հայերը կը հայհոյեն, պարտէզին մէջ նստող Յոյ-

ները մէջ կը մտնան եւ խնդիրը բաւական կը մեծանայ:

Վէճին միջոցին սեղանէ մը գաւաթ մը կը նետեն օղին մէջ, գաւաթը ծառի մը կը զարնուի և փշրուելով, կտորներէն մին հրեայի մը ճակատին կուգայ ու քիչ մը կը սկրդէ:

Անն գէպքը, ինչպէս լսեցինք ներկաներէն:

Արդ, հետեեալ օրէն իսկ սկսեալ յունական թերթերը մեծ համեմատութիւններ տալով այս դէպքին օրուան խնդիրը ըրին, խմբագրականներ նուիրեցին անոր և ջանացին Յոյները գրգռել Հայերուն դէմ և բաւական ալ յաջողեցան:

Այդ առթիւ էր որ «Ազատ Խօսք» իր 20րդ տետրին մէջ «Յոյները և Հայերը» վերնագրով յօդուածի մը մէջ զաւ յայտնած էր Յոյներու հակահայկական զրգռոիչ հրատարակութեանց դէմ և Մէնչիէի հրապար. կին աննշան վէճը յիշատակելով, աւելցուցած էր. «Կը կարծենք որ ժամանակ է, յունական թերթերու այդ ձգտումը (հակահայկական) աւելի ծաւալ չգտած, միջոցներ ձեռք առնուլ միանգամ ընդմիջա բառնալու համար այդ անխորհուրդ հակառակութեան ոգին»:

Եւ բաւական չհամարելով միայն գրելը, պարտք համարեցինք երթալ գտնել «Վիզանթիոն»ի խմբագիրը, որ ամէնէն աւելի բուն կերպով կը յարձակէր Հայերուն դէմ, բերանացի բացատրել իրեն թէ Հայերը երբեք հակայունական ոգի մը չեն կրեր և թէ Մէնչիէի դէպքը ամենաջնջին պատահմունք մըն է որուն յիշատակութիւնը ընել քնաւ չէր արժեր:

Գոհ ենք ըսելու որ մեր դիմումները անպտուղ չը մնացին և յոյն թերթերը դադրեցուցին իրենց պայքարը Հայերուն դէմ:

Արդ, ճիշտ նոյն ասին, Եգիպտոսի մէջ գտնուեցաւ թերթ մը, և, ամօթ մեզի, հայ թերթ մը (և թէ երբեք հայերէն լեզուով հրատարակուած թերթ մը անպատճառ իբրև հայ թերթ մը պէտք է ընդունիլ) որ չը խղճաց, ստոր վրէժխնդրական ոգիէ մը մղուած և կամ գուցէ անխոստովանելի վարձատրութեան մը փոխարէն, Մէնչիէի հրապարակին ամիսէ ի վեր մտոյուած զէպքը վերականգանացնել և անպատկառ աներեսութեամբ ու շնական ստախօսութեամբ հրատարակել թէ «Կրակի խմբադիր Բարսեղ Շահպազ Յոյնի մը գլուխ պատռած է»:

Ու այդ թերթը Վահան Գիւրքեճեանի հովանաւորութեան տակ ծածկուած ու իր ամօթալի գոյւթիւնը չկրցող խոստովանող Յառաջդիմասէր Միութեան օրկան «Լուսաբեր» ն է:

Բայց պահ մը ենթադրենք թէ «Լուսաբեր» ի ներքին լուրը ճշմարիտ իրողութիւն մը ըլլար, փոխանակ բացարձակ սուտ մը ըլլալու, միթէ հա՞րկ էր որ թերթ մը, և հայ թերթ մը, այդ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ ընէր: Միթէ այդքա՞ն կարեօր զէպք մըն էր փոշոցը պատահած սովորական կոխ մը: Եւ միթէ կը վայլէ՞ր որ, երբ բովանդակ եգիպտական մամուլը լուռ կը մնար, Վահան Գիւրքեճեանի օրկանը եղող «Լուսաբեր» թերթը զրպարտէր Բարսեղ Շահպազը ըսելով թէ՛ յոյնի մը գլուխը պատռած է. և ասիկա ճիշտ այնպիսի փախուկ ատենի մը ուր Յոյները աօրթ կը փնտռէին կամ կը ստեղծէին հակահայկական պայքար մը մղելու համար:

Բայց ասկէ շատ աւելին կայ:

Հիմակ որ Եգիպտական Դատարանին առջև ապացուցուեցաւ թէ Բարսեղ Շահպազ կամ ու է հայ մը Յոյնի գլուխը պատռած չէ բնաւ, Յառաջդիմասէրներու

օրիանը, նմանը չտեսնուած խայտառակ աներեսութեամբ կը գրէ:

«Մենք կրնանք մէկէ աւելի անձնաւորութիւններ վկայութեան բերել որոնք ժամանակին ականատես եղած էին Բարսեղ Շահպաղ խելագարին յոյն իրիտասարդի մը հետ կոռւած և ջուրի գաւաթով անոր գլուխը վերաւորած ըլլալը:»

«Նոյնպէս մի քանի տասնեակ պատուաւոր ազգայիններ դիտենք որոնք Շահպաղին վերոյիշեալ յանցանքով ձերբակալուած ըլլալը կրնան հաստատել:»

Կը տեսնէ՞ք մասնաշնչութեան մարմաջէն բնուած այդ թերթը ստորնութեան ինչ քարձրութիւններու կը հասնի: Եղիպտակաւ դատարանի վճռէն յետոյ, տակաւին ան կը յամառի, իր կարիճի բնազդէն մղուած, Բարսեղ Շապաղի գարշապարէն խածնել: Անիկա՛ իր մոլեգնութեանը մէջ չվարանիք եղիպտական արգարութիւնը անարգելու. անիկա, իր վրէժխնդրութեան թարախէն կուրցած, գլխիվայր կը թաւալի գարշելութեան խորխորատին մէջ:

Բայց իր անկումէն առաջ պէտք կը զգանք ունելիլով մը իր օձիքէն բռնել և իրեն ըսելու:

Ա. Բացարձակ սուտ մըն է թէ Յոյնի մը կամ ո և է մէկու մը գլուխ պատռած է Մէնչիէի դէպքին մէջ:

Բ. Բացարձակ սուտ մըն թէ Բարսեղ Շահպաղ մասնակից եղած այդ դէպքին:

Սրբ, երբ Լուսարեւր կը պնդէ թէ մէկէ աւելի անձնաւորութիւններ «Ա.ԿԱՆԱՏԵՄ» եղած էին Բարսեղ Շահպաղին յոյն երիտասարդի մը հետ կոռւած և գլուխը վերաւորած ըլլալուն, և թէ մի քանի տասնեակ պատուաւոր» ազգայիններ Շահպաղի վերոյիշեալ յանցանք-

քով ձերբակալուած ըլլալը կը հաստատեն» կա՛մ այն է որ զիտակցօրէն չարաչար իջ ստէ ևւ կամ այլ իր « պատուաւոր » ազգայինները մէյմէկ անպատկառ ստախօսներ են , Վահան Քիւրքճեանի հովանաւորութեան տակ չարագործող Յառաջգիմասէր Միութեան զարդերը ըլլալու արժանի :

ՀԱՐՅՈՒՄ ՄԸ

Վերջերս տեղական հայ թերթերու մէջ իրարու դէմ գրուած յօդուածներու անպատշաճ ոճը ընկերական շրջանակներու մէջ վիճաբանութիւններու առիթ տուած է թէ՛ պէ՞տք այդ գլխաւոր թիւնները հայհոյական, նախատական, մեղանշական, ևն. նկատել քանի որ Յիսուս անգամ զարժածած է այդ տեսակ բառեր, երբ Յիսուս իր հաւատակիտները և ընդգլխաւորները « ծնունդ իժից » կը կոչէ, գանսնք անարգած չըլլա՞ր :

Նմանապէս Սուրբ Յովհաննէս Մկրտիչ, առանց « Ազատ Բեմի » ի սրբագիր ըլլալու, պէտք եղած ատեն շնորհքով կը նախատէր թշնամիները և իր մեղմագոյն բացատրութիւնն էր. « իժից և քարբից ծնունդք » :

Իսրայէլի Մարգարէներն ալ որոնք իրենց ժամանակի պարսաւագիրներն էին, հայհոյութեան և նախատական բացատրութեանց մէջ վա՛յ :

չէին մնար մեր Աբայ Մարգարէէն:

Կը հաճի՞ն արդեօք այս մասին պէտք եղած բայտալութիւնները տայ մեր կղերականները:

ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ

Վերջին պահուն մասնաւոր և հաւասար պարբերէ մը կը տեղեկանանք թէ Վսեմ: Պօղոս Փաշա Նուպար այս երեքշաբթի առաւօտ Ալեքսանդրիա կը հասնի: Նորին Վսեմութիւնը քանի մը ժամ հաս հանգստանալէ յետոյ նոյն երեկոյեան ճեպընթաց կառախմբով պիտի մեկնի Փահիրէ:

ՓՈՒՍԱՆ ԻՍԿԵՊՍԱԿԻ

Հանգուցեալ տիկին Նիկողոսօֆի յուզարկաւորութեան առթիւ Տ. Պերճ Օհանեան մէկ անդղիական սօկի նուիրած է ի նպաստ Կովկասի հայ կարօտելոց կազմուած յանձնախմբին:

ԻՄԱՍՏՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

Կը լսենք թէ նորակազմ հոգաբարձութիւնը պորսայի վարչական խորհրդին զիմում ընելով, խնդրեր է որ Պօղոսեան վարժարանի ուսուցիչներուն արգիլէ պորսա մտնելը, որովհետև անցեալները ուսուցիչ մը պորսային մէջ բանպակ կարծուելով ծախու հանուեր է:

Յետոյ հասկցուեր է որ այդ ուսուցիչը ո՛չ թէ բամպակ այլ նոր հասած տունկերէն է եղեր:

New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՑԱՆՈ

ՆՈՐ ՎԻՔՏՐՈՒՆԻԱ ՕԹԷԼ Աղեքսանդրիոյ Մօս
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱՆԻ Հալիթ Թիւ 2

Առաջին կարգի օթել, մասնաւորապէս շինուած, այժմուսը բոլոր հանգստաւէտութեան պայմաններով: Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեքտրական լոյս: ՉԱՖԱԽՈՐ ԳԻՆ: Թեղեֆօն Թիւ 370: Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ: Թոսմալայով տասը վայրկեան Աղեքսանդրիայէն:


Ս. Ֆ. ՌԷՉԻԿ, ՏՆՕՐԷՆ

Յ. Գ. - Մասնաւոր դին կառավարական պաշտօնականերու և զինուորականներու համար: Բոլոր սենեակները ծովուն վրայ կը նային:

ՍԵՆ ԱՅՄԱՍԱՆՅՈՑ
ՈՐՈՍԳՐԱՎԱՆ ԵՒ ՏՊԱՐԱՐԱՆԱՆ ԱՇՄԱՍՈՒՑԵԱՆՑ
Գ. ՆԱԼԻԲԵՆՆԷ
ՀԱՏՐԱԲՈՒՆ
«Նայի և ձերտեղարդ խորհրդանշ. եւ ճիշ.»
15 RUE STAMBOUL 15
ALEXANDRIE

Այս աշխատանքը մէջ կը պատրաստուին Գրքեր և Ներքի գտնի կարգեր. Քառասն. Պղնձ. Պղպտակ եւ Քրոմի. արծաթ և ուրիշ մետաղներ. Թանաքներ և. Արհեստագործի և Կապտարայաբերի ճեղքարեղ կարգեր:
Տարածուած ամեն անակ կարգեր նալ և արար Գրքերով. Հարսանկան Նրախարգրներ. սոյնու շարանը. Նախակարգ. լինը. ստացուցիչներ. նոյնու շարանը. Նախակարգ. Նայրից ար. Քրոմի. զիջար և. Մասնաւոր խնամք ճաշարի և ճարտիքեան Մաս Գարդ դին:
Այս աշխատանքը կը շանձարարներ Աղեքսանդրիոյ. Գահիրէի և բոլոր եգիպտաց ազգանոց. գտնանշանով թէ ան կայտը շանձարարութիւնները ամենամեծ խնամքով կը կատարուին և գտն կը ձեռն ամեն և զտարանած անշանձարը:
Ստոր կարծառուներու դիմել ասոյ նախնայը անկամ մը աշխուկ տաք աշխատանքը:

«ՍԶԱՏ ԽՕՄԻ» Զեռիքէ
ԿԸ ՎԱՃԱՌՈՒՄԻ
Աղեքսանդրիա՝ Տ. Յ.
Հագրիկանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ.
Թեղալիանի խանութը:
Գահիրէ՝ լրագրավաճառ
Տ. Հունիի և Կոլտըն Բէջօյ-
քի քով և «Լուսարև»
Թերթի ցրուիչին մօտ:
Նախորդ շարթուան
Թիւերը կը վաճառուին
կրկին զինով:



“ԱՋԱՏ ԽՕՄՔ”-ի Պարկանները

— ԱՋԱՏ ԽՕՄՔ - ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՄԲԱՅ ՕՐԵՐԸ
Եզիպտոսի համար բաժնեզինեք է

40 ՔԻՆԸ 40 ՂՐԸ ՈՂՉ
20 ” 20 ” ”

Ա Ր Տ Ա Ս Ա Հ Մ Ա Ն

ԵՆՐԱՄԱ 40 ՔԻՆ 10 ՏՐԱՂՔ
ՌԱՌՍԻ ” ” 4 ՌՈՒՄԼԻ
ԱՍԵՐԻԿԱ ” ” 2 ՏՈԼԱՐ

Ռաժանդագրութիւնը կանխիկ
ՀԱՏԸ 1 ՂՐԸ ՈՂՉ

“ԱՋԱՏ ԽՕՄՔ”-ի համար բաժնեզինեք կամ
որ և է գրութիւն պէտք է ուղղել հե-
տեւայ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPTE)

Մանուգրութիւնը կրեցունուի՞ն ճասնուոր
պայմաններով.

Պատասխանաւոր խմբագիր **Ե. ՕՏԷԱՆ**

Տպագրութիւնը Գ. ՆԱԶԱՐԵԹԻԱՆ ԱՐԽԱՆԵՂԻՄ